ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 785-Ա/2 «18» մայիսի 2021

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանի 50-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն հավելվածներ NN 1-ի և 2-ի:
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գ. Մինասյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տպագրել շաբաթաթերթի առաջիկա համարում:
3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղար Գ. Մելիքբեկյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ
/պաշտոնակատար/

18.05.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211